Թ. ՔՈՒՊԱ ՆԱՀԱՆԳ

193. ՔՈՒՊԱ նահանգ 'ի հարաւոյ ունի զՇաքի և զՇրուան՝ բարձրաբերձ լերամբքն Կովկասու անջրպետեալ, 'ի հարաւոյ զՊաքու, յելից զծովն Կասպից, 'ի հիւսիսոյ զԴարբանտ և զՁաղստան: Լեռնավայր է մեծ մասն երկրին, ծովակողմանն միայն դաշտանալով. և 'ի սմա ամբառնայ մի 'ի բարձրագոյն կատարաց Կովկասու Շահ-դաղ 13,100'. և գետք ոչ սակաւ իջանեն 'ի նոցուն. որոց գլխաւոր է Սոմուր աստակահոս և երագընթաց քան զամենայն գետս Կովկասու, որ յարևմտից հիւսիսոյ 'ի Ճարոյ-Պելոգան (199) նահանգէ գայ և ազէլնաձև հատեալ զայս նահանգ՝ Թափի 'ի ծովն բաղում բերանօք. այլ գետք, Քուպէալ կամ Քուպա, Դարա-լոյ, Տէնկ, և այլն: Զորք գաւառք են նահանգիս, Շավրան, Պուտուխ, Քաղրի և Քուպա, յորս ընդ ամէն 300 գեօղք են և բնակիչք 90,000, Լէկղիք, Թուրքք և Պարսք. իսկ Հայք 2000 և Հրեայք 3000: Ի հնումն Կովկասեան ժողովուրդք՝ Լեկք (յանուն Լեկանայ եղբօր Հայկայ) և այլք, և երբեմն և Աղուանք ունէին զերկիրս զայս:

194. Ա. ՁԱՎՐԱՆ գաւառ 'ի հարաւոյ կայ այլոցն առ Քասպիստանաւ, Պաքուաւ և Կասպիականաւն. առ որով ամբառնայ Պէլպարմաք լեառն 3000', վասն հնգից ապառաժ գագաթանցն այսպէս կոչեցեալ. յելից նորա կայ Խաբարինէ գիւղ, առ որով աւերակք հնոց շինից, և պահակի միոյ 'ի լերինն՝ նման Դարբանտայն, զոր և 'ի Նուշրէւանայ Պարսից արքայէ կարծեն ոմանք շինեալ, և Թերևս իցեն անուանեալ Դրոնդ Շրուանայ: — Բ. ՊՈՒՏՈՒԽ գաւառ յարևմտակողմն նահանգին երկայնեալ ձգի, լերինս բարձունս ունելով, և 'ի միում յայնցանէ յ'7000' բարձու կայ Պոպոկ աւան. սակաւաձանօթ է երկիրն, որպէս և Գ գաւառն ՔԱԶՐԻ համանուն ա-ւանաւ յաջմէ Սամուրայ, որք Թերևս յանուն խաղրաց ազգի այսպէս կոչեցան, զի և ոչ հեռի 'ի վայրացս գեգերեին երբեմն նոքա, յորոց և Կասպիականն իսկ կոչեցաւ Ծով Խաղրայ: Կանգնեալ է 'ի խաղրի մահարձան զօրավարի միոյ Շահ Թահմասպայ որ յամին 1458 մարտուցեալ ընդ Շրուանն Շահի սատ անկաւ: Ի հարաւոյ աւանին կայ Կեւէր կամ Խէլոր գեօղ, ուր ձմերոցս հաստատեաց առ մեօք կուսակալն Տաղստանու հայկազն Արղութեան:

195. Գ. ՔՈՒՊԱ գաւառ յելից կայ և շրջափակեալ յայլոց և 'ի ծովէ. քաղաքն համանուն յաջմէ Քուսեալայ, բարձր 1875', ունի բերդ և հողաշինուած պարիսպս և ցցապատնէշ վայտեայ, 800 տամբք և վաճառանոցաւ ՈՃԷՅ կայսերէ Էմիր Ա-ՃԷմայ (192). մզկիթք Քուպայ բրգաձևք են և ծխանառաձև կատարաւ՝ ուստի կարդայ միւէզզինն: Բնակիչքն 4,300, յորս և Հայք սակաւք. իսկ Հրեայք երբ 3000 նստին 'ի Քուպէ աւանի յայնմ կողման գեղոյն, որք 'ի հաղարաց ամաց հետէ ասեն բնակել 'ի գաւառիս յեօթն գեօղս և ապա 'ի միում յայսմ ամիսուրեալ. առ անին խօսին սոքա զԷրդ բարբառ պարսկի: Յառաջ քան զԺԷ դար 'ի տեղւոջ Քուպայ կայր աւերակ հնոյ քաղաքի, զոր կարծեմ Թագաւորանիստ լինել Մաղթեաց 'ի Դ դարու, և յելից նորին զԴաղան Վաղնէան՝ յորում Ս. Գրիգորիս Թոռն Լուսաւորչին ընթագրեալ ձիոց յարշաւանի կատարեցաւ վկայութեամբ, յամին 348, ծագէ 'ի ծագ հեռի յարևմտեան սահմանացն Հայոց՝ 'ի նահանգակուութեան վայրաց հաւուն իւրոյ. և Թերևս ցայժմ հարաւակողմն Դարբանտայ ՄՈՒՍՔՈՒՐ կամ ՄՈՒՍՔՈՒԴ՝ այսպէս կոչեցի յանուն Մաղթեաց. յորոց զվերջ մահուան Թոռին լուսաւորչին իւրեանց լուծին Հայք՝ հարեալ զնոսին և սպանեալ զարքայն նոցա զՍանեսան՝ որ զՍուրբն 'ի մահ դատապարտեաց: — Յարևմտից հիւսիսոյ քաղաքին կայ Նոր Քուպա 'ի լերինս, ուր Երմոլոֆ զորավար Ռուսաց որ նուաճեաց զկողմանս զայսոսիկ՝ հաստատեաց տունս զինուորաց կանամբեաց:

Ժ. ԴԱՐԲԱՆՏ

196. Այս նահանգ որ երբեմն առանձին գաւառաւն անձուկ սահմաներ, և այժմ ընդարձակեալ գլուխ կայ բազմաց գաւառաց Տաղստանու՝ յելից կուսէ զծովն ունի, 'ի հարաւոյ զՔուպա, 'ի մտից զՇէբի և զՊելոգան, 'ի հիւսիսոյ զԹարքու նահանգ Կովկասու. որոյ լերինք աղեղաձևեալ ունին զՀամբէն երկիրս զայս, և գետք ոչ հզօրք խաղան ընդ խորահովիտսն: Բնակիչքն սերունդք նախնի լեռնականաց Լեկաց և Հունաց և այլոց բնիկ ազգաց և եկաց կան ընդ ձեռամբ Ռուսաց, այլ ոչ ամենեքին նուաճեալք: Եօթն գաւառք են նահանգիս, յորոց երեք հիւսիսայինքն Տարկոյ, Գազի-քումուք և Քայդաք՝ յայնկոյս կան պահակին Դարբանտայ, և ջունին ինչ յարակցութիւն ընդ Հայ աշխարհի, վասն որոյ և արտաքոյ մնան տեղագրիս. իսկ չորեքին հարաւագոյնքն փոքր 'ի շատէ մերձաւորք են Աղուանից և Հայոց, և են Սամուր, Քուրալ, Թապասսերան և Դարբանտ, որք 'ի հնումն բազում անգամ ազատ ժողովրդոց կալուածք, և երբեմն Հայոց և յաճախ ևս Պարսից հնազանդեալք:

197. Ա. ՍԱՄՈՒՐ յելից Քօթունայ (187) կայ և 'ի հիւսիսոյ Պուտուխայ (192), և ունի զԱխտի բերդաւան յաջմէ Սամուր գետոյ յ'3300' բարձու, ուր նստի հրամանատար Ռուս: Յարևելից նորա կայ Նոր Թիֆլիզ ամրոց: 6,000 բնակիչք լեռնականք են գաւառիս, անդեղրդք 'ի լերինս: — Բ. ՔՈՒՐԱԼ յելից Սամուրայ կայ, և ունի զՔուրա կամ Կիւրի գեօ. բնակիչքն 10 կամ 15,000 ոգիք Քուրա կամ Քուրրէ կոչեցեալք, որք երբեմն՝ վարեին ազատ իշխանաք Արսլանպեկ մականուանեալք յազգէ Աւարաց, զորս հալածեաց Նադիր Շահ յայնկոյս լերանցն, և զսերունդս նոցա դարձ արարեալս անդրէն՝ գերեաց Շէամիլ առաջնորդն ազատ լեռնականաց յամին 1842: Գլխաւոր տեղն գաւառիս է Քուրա 'ի 4800' բարձու. զապարանս խանիցն կամ Սրալանբէկից՝ յանկե-